

**ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

(ըստ ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի N 1202-Լ որոշման հավելվածով հաստատված ծրագրի)

Միջոցառումները	Կատարող <sup>1</sup> / Համակատարող	Ժամկետ	Կատարողական (Արդյունք/ընթացք)
<b>I. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԱՌԱՋԱՐԿԸ: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾԻ ՔՆԵՐԸ</b>			
<b>1. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՈՒԿԱ</b>			
<b>1.1. Պետական պարտատոմսերի շուկայի բարելավում</b>			
1.1.1. Պետական պարտատոմսերի թողարկումների քանակի նվազեցում՝ զուգահեռաբար ծավալների ավելացմամբ:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021 թ. հունիս 30	Պետական գանձապետական պարտատոմսերի համախմբման և տեղաբաշխման աճուրդների ժամանակացույցի վերանայման արդյունքում զգալիորեն նվազել են ինչպես շրջանառության մեջ առկա թողարկումների (ըստ առանձին ԱՄՏԾ-ների) քանակը, այնպես էլ տեղաբաշխման աճուրդների քանակը:  Սույն կետը իրականացվել է:
1.1.2. Ուսումնասիրել 6 ամիս մարման ժամկետ ունեցող պարտատոմսերի ծավալների ավելացման և դրանց՝ որպես ուղենիշային սահմանման հնարավորությունները:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2020թ. դեկտեմբեր 31	ՀՀ ֆինանսների նախարարությունը շարունակում է 52 շաբաթ և 39 շաբաթ ժամկետով, յուրաքանչյուրը 3 մլրդ դրամ ծավալով, ՊԿՊ-ների տեղաբաշխումների իրականացման կայուն վարքագիծը՝ առկա հնարավորությունների սահմաններում ուղենշային ծավալ ձևավորելու և 6 ամիս մարման ժամկետ ունեցող պարտատոմսերն ուղենշային սահմանելու նպատակով:  Սույն կետը իրականացվել է:

<sup>1</sup> Միջոցառման համար պատասխանատու մարմինը (Կատարող) այ ու նակու մ նշված առաջին մարմինն է:

<p>1.1.3. Պետական պարտատոմսերի շուկայում ներդրողների հետ հարաբերությունների գործառույթի զարգացում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Մեկ պատուհանի տեսքով տեղեկատվության ներկայացում, մասնավորապես՝ դրան նվիրված առանձին ինտերնետային կայքում առնվազն եռամսյակային կտրվածքով թարմ և ամբողջական տեղեկատվության (մակրոտնտեսական, պետական պարտատոմսերի աճուրդներ, շուկայի ծավալներ, կարգավորումներ, ուղեցույցներ և այլն) հրապարակում (հայերեն և անգլերեն լեզուներով)՝ հաշվի առնելով խոշոր ինստիտուցիոնալ ներդրողների պահանջները.</li> <li>- ներդրողներին ուղղված ակտիվ միջոցառումների (պարբերական roadshow-ներ, շնորհանդեսներ) իրականացում:</li> </ul>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>Տեղեկատվության հրապարակման համար առանձին կայքի ստեղծման մասով՝ 2022 թ. դեկտեմբերի 31</p> <p>Պարբերաբար (առնվազն տարեկան մեկ անգամ)</p>	<p>Թեև նախատեսվող նոր կայքում հրապարակման ենթակա տեղեկությունները մեծամասամբ այսօր էլ առկա են ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում, այնուհանդերձ նոր կայքի մշակման նպատակով աշխատանքային կարգով քննարկումներ են իրականացվել ՀՀ կենտրոնական բանկի հետ: Քննարկումները ներկայումս շարունակվում են: Կայքի նախագծի վերաբերյալ ընդհանուր համաձայնության առկայության պարագայում կկազմվի կայքի նախագծման տեխնիկական առաջադրանքը: Ներդրողների հետ հարաբերությունները կրում են շարունակական բնույթ: Ներքին շուկա: Գանձապետական պարտատոմսերի շուկայում գործակալների (առաջնային դիլերների) հետ շարունակվում են առնվազն ամենամսյա հանդիպումները: Գանձապետական պարտատոմսերի շուկայի ոչ գործակալ մասնակիցների հետ եռամսյակային պարբերականությամբ հանդիպումների շարքն ընդհատվել էր՝ COVID 19 համավարակով պայմանավորված: Այս հանդիպումների շարքը վերականգնվել 2022 թվականից:</p> <p>Սույն կետը դեռևս ամբողջությամբ չի իրականացվել</p>
<p>1.1.4. Վերլուծել ներդրումային (այդ թվում՝ առաջնային դիլերների) և բանկային ծառայությունների առավել խիստ գործառնական տարանջատման առավելությունները և թերությունները, առաջարկել տարանջատման իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմներ:</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2021 թ. դեկտեմբեր 30</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Այս միջոցառումն առաջարկվել է նաև IMF-ի կողմից:</li> <li>• 2021թ.-ի ապրիլի 21-ին կազմակերպվել է խմբի հերթական քննարկումը:</li> <li>• Կենտրոնական բանկը նախատեսում է միջոցառումն ավարտին հասցնել մինչև 2023թ.-ի մարտի 31-ը:</li> </ul>

			<p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>1.1.5. Առաջնային դիլերների հետ կնքվող համաձայնագրի վերանայում՝ առաջնային և երկրորդային շուկաներում մասնակիցների իրավունքներն ու պարտավորությունները հավասարակշռելու և լրացուցիչ խթաններ նախատեսելու համար:</p>	<p>«Ֆինանսների նախարարություն «Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. հունիսի 30</p>	<p>2020 թվականի հոկտեմբերի 30-ին Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից հաստատվել է «Արժեթղթերի շուկա ստեղծողի կանոնները», որը նոր խմբագրությամբ միավորում է նախկինում գործող «Շուկա ստեղծողի կանոնները» և «Պետական պարտատոմսերի գործակալների գնանշումների կանոնները»: Այս փաստաթղթով վերանայվել են առաջնային դիլերների կողմից շուկա ստեղծողի գործառույթի իրականացման կանոնները:</p> <p>Սույն կետը իրականացվել է:</p>
<p>1.1.6. Ուսումնասիրել սփյուռքի պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը. ուսումնասիրության ադյունքներով ներկայացնել սփյուռքի պարտատոմսերի տեղաբաշխման նպատակով ֆինանսական գործիքի մշակման և կիրառման վերաբերյալ առաջարկություն:</p>	<p>«Ֆինանսների նախարարություն «Էկոնոմիկայի նախարարություն «Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) «ՎԱ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ</p>	<p>2022 թ. մարտի 31</p>	<p>Սփյուռքի պարտատոմսերի ուսումնասիրության արդյունքները և համապատասխան առաջարկությունները «Կառավարության աշխատակազմի ղեկավարին է ներկայացվել 05.04.2022 թվականի թիվ 01/7-1/5473-2022 գրությամբ:</p> <p>Սույն կետը իրականացվել է:</p>
<p align="center"><b>2. ԴՐԱՄԱԿԱՆ ՇՈՒԿԱ: ՌԵՊՈ ՇՈՒԿԱ</b></p>			

**2.1. Դրամական շուկայի զարգացում: Ռեպո շուկայի խորացում**

<p>2.1.1. Դրամի գնի բացահայտման համար դրամական շուկայի ուղենշային դրույքի մշակում:</p>	<p>Դրամական շուկայի աշխատանքային խումբ (մասնակիցներն են ֆինանսական շուկայի մասնակիցները, ՀՀ կենտրոնական բանկը և ՎՋԵԲ-ը)</p>	<p>2021 թ. մարտ 31</p>	<ul style="list-style-type: none"> <li>Դրամի ուղենշային դրույքի հաշվարկման նկատառումով ձևավորվել է դրամական շուկայի զարգացման աշխատանքային խումբ Կենտրոնական բանկի, ֆինանսական շուկայի մասնակիցների, AMX-ի և EBRD-ի մասնակցությամբ:</li> <li>Դրամական շուկայի զարգացման աշխատանքային խմբի քննարկումների արդյունքում որոշվեց, որ ուղենշային դրույքը պետք է հաշվարկվի մեկօրյա ռեպո շուկայում կնքված գործարքների հիման վրա: Այն դեպքում, երբ կունենանք բավարար քանակով և ծավալով (նախնական գնահատականով՝ առնվազն 20 մլրդ ՀՀ դրամ) օրական ռեպո գործարքներ այս շուկայում, այդ դեպքում նպատակահարմար կլինի հաշվարկել դրամի ուղենշային դրույք: Մեկօրյա ռեպո գործարքների հարթակը նախատեսվում է գործարկել այս տարվա ընթացքում:</li> </ul> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>2.1.2. Աշխատանքներ ռեպո շուկայի խորացման, այդ թվում՝ ֆինանսական շուկայի մասնակիցների հետ գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրերի (ICMA Global Master Repurchase Agreements) ներդրման ուղղությամբ, որը հնարավորություն կտա ստանդարտացնել ռեպո գործառնությունների պայմանագրերը:</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>2021 թ. հունիս 30</p>	<ul style="list-style-type: none"> <li>Կենտրոնական բանկի, AMX-ի և EBRD-ի հետ համատեղ աշխատանքի արդյունքում մշակվել է կենտրոնացված ռեպո հարթակի մոդելի նախագիծ, որը պետք է կառավարվի AMX-ի կողմից: Սա կարևոր է ինչպես ռեպո շուկայի խորացման, այնպես էլ փաստացի (մեկօրյա) ռեպո գործարքների հիման վրա դրամական շուկայի մեկօրյա ուղենշային դրույքի դուրսբերման համար:</li> </ul>

			<p>2021 թվականի հունիսի 22-ին և 2022 թվականի փետրվարի 17-ին Կենտրոնական բանկը կազմակերպել է հանդիպում-քննարկում առևտրային բանկերի մասնակցությամբ նշված հարթակի նախագծի վերաբերյալ, որի ընթացքում հարթակի գործունեության հիմնական պարամետրերը համաձայնեցվել է քննարկման մասնակիցների հետ: Ներկայումս Կենտրոնական բանկի և AMX-ի միջև քննարկումներ են իրականացվում ռեպո հարթակի մոդելի դետալների շուրջ: Հարթակի ներդրումն ակնկալվում է 2022թ.-ի վերջում:</p> <ul style="list-style-type: none"><li>• Կենտրոնական բանկը մշակել է նաև ռեպո գործարքների ստանդարտ գլխավոր համաձայնագրի՝ GMRA-ի ներդրման հայեցակարգ, որը քննարկվում է Կենտրոնական բանկի շահագրգիռ ստորաբաժանումների ներսում: Հայեցակարգը համաձայնեցնելուց հետո կմշակվի GMRA-ի պրակտիկ ներդրման միջոցառումները և ժամանակացույցը:</li><li>• Նախաձեռնել ենք նաև սերտ համագործակցություն International Capital Market Association (ICMA)-ի հետ, որի արդյունքում 2022թ.-ի հունիսին ICMA-ի կողմից իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվեց GMRA-ի ՀՀ իրավական համակարգում կիրառելիության վերաբերյալ իրավական եզրակացությունը: Այս գործողությունը հատկապես կարևոր է օտարերկրյա գործընկերների՝ տեղական ռեպո շուկա ներգրավելու տեսանկյունից:</li></ul> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
--	--	--	---

2.1.3. ՀՀ կառավարության հաշիվներում կանխիկ հոսքերի կանխատեսման և իրացվելիության միջնաժամկետ կանխատեսման գործառույթների արդյունավետության բարձրացում:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021 թ. դեկտեմբերի 31	Սույն կետը իրականացվել է:

**3. ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՎ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՇՈՒԿԱ**

**3.1. Պետություն-մասնավոր գործընկերության և պետական մասնակցությամբ ներդրումային ֆոնդերի շրջանակներում թողարկումներ**

<p>3.1.1.</p> <p>- Ենթակառուցվածքային ներդրումային նախագծերի (այդ թվում՝ քաղաքային տրանսպորտային համակարգի վերակառուցում, ջրային ռեսուրսների կառավարում, էներգետիկա և այլն) ֆինանսավորում կապիտալի շուկայի գործիքների միջոցով, որը կարող է ներառել ինչպես ենթակառուցվածքային ներդրումային ֆոնդերի ձևավորումը, այնպես էլ տարբեր աղբյուրներից ստացված ֆինանսավորումը ենթակառուցվածքային պարտատոմսերի թողարկումների հետ զուգակցելը:</p> <p>- Վերլուծել պետական մասնակցությամբ մասնագիտացված ներդրումային ֆոնդի ստեղծման նպատակահարմարությունը, և ըստ այդմ, մշակել հայեցակարգ:</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>Շարունակական, մինչև 2022 թ. հուլիսի 31 առնվազն մեկ նախագծի ֆինանսավորման իրականացում<sup>2</sup></p>	<p>Ջրային կոմիտեի կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարություն են ներկայացվել հանրային ներդրումային ծրագրերի 2 նախագծեր՝</p> <p>1. «ՀՀ Արագածոտնի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» (Նախագիծ 1)</p> <p>2. «Ոռոգման նպատակով օրվա կարգավորման ջրամբարների կառուցում և վերակառուցում» (Նախագիծ 2)</p> <p>2022 թվականի ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների հաշվին իրականացվել է «Հայաստանի Հանրապետության մարզերում ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում թվով 31 օրվա կարգավորման ջրավազանների առաջնահերթ կառուցում և վերակառուցում» ծրագրի նախագծային փաստաթղթերի ձեռք բերման մրցութային գործընթացը, որի արդյունքում՝ հաղթող ճանաչված ընկերությունների կողմից նախատեսված ժամկետում կմշակվեն</p>
--	--	---	---

<sup>2</sup> Միջոցառման իրականացման շրջանակներում մանրամասն էլ հաշվի առնել «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը:

			<p>համապատասխան նախագծային փաստաթղթերի փաթեթները:</p> <p>Ներկայացված երկու նախագծերի վերանայված և լրամշակված տարբերակները 2022 թվականի հունիսի 24-ին, Ջրային կոմիտեի թիվ 01/15/2580-2022 գրությամբ ներկայացվել են ՀՀ ՏԿԵՆ:</p> <p>Գործնականում կապիտալի շուկայի գործիքների կիրառմամբ՝ թողարկումների միջոցով նախագծերի ֆինանսավորում դեռևս չի իրականացվել:</p> <p>Պետական մասնակցությամբ ներդրումային ֆոնդեր են ստեղծվել, որոնցից են «Ամբեր Կապիտալ» և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն: Մոտ ապագայում նախատեսվում են մշակել գործիքներ՝ այլընտրանքային ֆինանսավորմամբ զբաղվող ֆոնդերում պետական մասնակցությամբ ծրագրեր իրականացել:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>3.1.2. Ենթակառուցվածքային ընկերությունների գործունեությունը կարգավորող դաշտում կապիտալի շուկա մուտքի օրենսդրական խոչընդոտների վերացում:</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. մարտի 31</p>	<p>«Էներգետիկայի մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքներում, ինչպես նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ նախաձեռնելու ողջությամբ տեղի են ունեցել մի շարք հեռավար քննարկումներ ՀՀ էկոնոմիկայի</p>

			<p>նախարարության, հանձնաժողովի և այլ իրավասու մարմինների ներկայացուցիչների միջև, որոնց շրջանակում անդրադարձ է կատարվել խնդրո առարկա հարցի առնչությամբ հանձնաժողովի բարձրացրած հարցերին, և ձեռք է բերվել պայամանավորվածություն դրանք հետագայում պատկան մարմինների հետ առավել թիրախային և համակողմանի քննարկման վերաբերյալ:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
--	--	--	---

**3.2. Համայնքային պարտատոմսերի թողարկումներ**

<p>3.2.1. Խոշոր համայնքների (մասնավորապես՝ Երևան քաղաքի) կողմից պարտատոմսերի շուկայի միջոցով ֆինանսավորման իրականացում: Պարտատոմսերի միջոցով երկարատև ֆինանսավորումը կարող է ուղղվել ենթակառուցվածքային զարգացման նախագծերի ֆինանսավորմանը: Այդ թվում, ուսումնասիրել հնարավոր թողարկումների համար երաշխիքների և այլ գործիքների ներգրավման հետ կապված ծախսերը և օգուտները Երևանի և այլ խոշոր համայնքների համար:</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>Շարունակական, մինչև 2022 թ. դեկտեմբերի 31 առնվազն մեկ թողարկման իրականացում</p>	<p>Համաձայն ՀՀ մարզպետարանների կողմից ներկայացված տեղեկատվության՝ Համայնքները պարտատոմսեր չեն թողարկել:</p> <p>Միջոցառման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական դաշտ ապահովելու նպատակով աշխատանքային քննարկումների արդյունքում ձևավորված մոտեցումների հիման վրա մշակվել և շահագրգիռ գերատեսչությունների միջև շրջանառվել է «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Միաժամանակ, խնդրի կարգավորման վերաբերյալ ընդհանուր համակարգային դիտարկումները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p> <p>Համայնքային պարտատոմսերի թողարկման կապակցությամբ մոտեցումներն ամբողջացնելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկի</p>
--	---	--	---



			<p>ներկայացուցիչների հետ տեղի է ունեցել համապարփակ քննարկում, որի արդյունքների հիման վրա մեկնարկել է հանդիպումների շարք՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների ներգրավմամբ:</p> <p>Ներկայումս իրականացվում են աշխատանքներ Երևանի քաղաքապետարանի կողմից պարտատոմսերի թողարկման գործընթաց իրականացնելու ուղղությամբ՝ որպես պիլոտային ծրագիր՝ հետագայում այլ համայնքների կողմից նույնպես իրականացնելու մտադրությամբ:</p>
<p>3.2.2. Զարգացած համայնքներում ֆինանսական հաշվառման և հաշվետվողական համակարգի ներդրման մեխանիզմների մշակում:</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p>	<p>2023 թ. հունիսի 30</p>	<p>Համաձայն ՀՀ մարզապետարանների կողմից ներկայացված տեղեկատվության՝ Համայնքներում ֆինանսական հաշվառման և հաշվետվողական համակարգի ներդրման մեխանիզմներ մշակված չեն:</p> <p>Ըստ Ֆինանսների նախարարության՝ ՀՀ քաղաքային և գյուղական բոլոր համայնքների համար 2018 թվականի հունվարի 1-ից պարտադիր է Օրենքի համաձայն հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը:</p> <p>Այսպիսով, արձանագրվեց, որ կապիտալի շուկայի զարգացման ծրագրով նախատեսված 3.2.2 միջոցառման իրավական մեխանիզմները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արդեն իսկ մշակված և ներդրված են:</p> <p>Միաժամանակ, կարևորվեցին համայնքների կողմից Օրենքի պահանջների</p>

			<p>համաձայն հաշվապահական հաշվառման նոր համակարգին փաստացի անցում կատարելու և վերը նշված միջոցառումը՝ որպես հաշվապահական հաշվառման նոր համակարգին դեռևս անցում չկատարած համայնքների նկատմամբ լրացուցիչ լծակ կիրառելու հանգամանքները:</p> <p>Վերը նշվածի համատեքստում առաջարկվեց, որպեսզի ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարությունը, համաձայնության դեպքում, եռամսյակային պարբերականությամբ ներկայացնի տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման նոր համակարգին համայնքների անցման կարգավիճակի վերաբերյալ:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
--	--	--	---

**3.3. Պետական կազմակերպությունների թողարկումներ**

<p>3.3.1. Աճի պոտենցիալ ունեցող պետական մասնակցությամբ մի քանի ընկերությունների կամ դրանց բաժնետոմսերի առնվազն մի մասի մասնավորեցում ֆոնդային բորսայում հրապարակային առաջարկի միջոցով:</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն          ՀՀ ֆինանսների նախարարություն          ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն          ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>Շարունակական, մինչև 2023 թ. հունիս 30 առնվազն երկու ընկերության բաժնետոմսերի վաճառք ֆոնդային բորսայում</p>	<p>Էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ ներկայումս իրականացվում են աշխատանքներ «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի կողմից բաժնետոմսեր թողարկման գործընթաց սկսելու ուղղությամբ:</p> <p>Աճի պոտենցիալ ունեցող պետական մասնակցությամբ մի քանի ընկերությունների կամ դրանց բաժնետոմսերի առնվազն մի մասի մասնավորեցում ֆոնդային բորսայում հրապարակային առաջարկի միջոցով իրականացնելու նպատակով անհրաժեշտ է</p>
--	---	---	---

			<p>մշակել համապատասխան կարգ, որով կսահմանվեն ինչպես ընկերությունների ընտրության սկզբունքները այնպես էլ ֆոնդային բորսայում ընկերությունների բաժնետոմսերի վաճառքի մոտեցումները:</p> <p>Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի հետ համատեղ նախատեսվում է իրականացնել ծրագիր Եվրոմիության առաջին ուղենիշի ներքո, որի նպատակը կլինի ընտրված մասնավոր և/կամ պետական մի շարք ընկերությունների օգնել բորսայում ցուցակման գործընթաց սկսել (մոտ տասը կազմակերպություն սկզբնական փուլում):</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
--	--	--	--

**3.4. Մասնավոր հատվածի կողմից թողարկումներ**

<p>3.4.1. Խոշոր ընկերությունների կողմից կապիտալի շուկայի միջոցով ներդրումների ներգրավմանն աջակցություն, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- ընկերությունների հետ հաղորդակցություն, միջազգային վարկանշային կազմակերպությունների կողմից վարկանշմանը աջակցություն,</li> <li>- այդ ընկերություններում հանրության կողմից ներդրման հնարավորությունների ստեղծում, ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդերի կողմից այդ ընկերություններում բաժնետնտեսի ձեռքբերում, ընկերությունների բաժնետոմսերի մի մասի հրապարակային առաջարկ հանրությանը:</li> </ul>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն          ՀՀ ֆինանսների նախարարություն          ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն          ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>Շարունակական; մինչև 2022 թ. հունիս 30 առնվազն երկու ընկերության վարկանշում;</p> <p>Մինչև 2023 թ. դեկտեմբերի 31 միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆինանսավորում ստացած երկու</p>	<p>2023թ. հունիսի 6-ին ընդունված 1125 Կառավարության որոշման հիման վրա հաստատվել է «Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության վերաբերյալ» ծրագիրը: Ծրագրի համաձայն ընձեռնվում է հնարավորություն պարտատոմսեր և բաժնետոմսեր թողարկող, ինչպես նաև միջազգային վարկանիշ ստացող ընկերություններին ստանալ պետական աջակցություն:</p>
--	---	--	---

		<p>խոշոր ընկերության կողմից պարտատոմսերի թողարկում</p>	
<p>3.4.2. Standard&amp;Poor's-ի սուվերեն վարկանիշի ստացում:</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. հունիսի 30</p>	<p>2021 թվականի հունիսի 28-ին ՀՀ ֆինանսների նախարարության և «Standard&amp;Poor's» վարկանիշային գործակալության միջև կնքվել է վերջինիս ծառայություններից օգտվելու մասին պայմանագիրը, որի հիման վրա 2021 թվականի հոկտեմբերին «Standard&amp;Poors» վարկանշային գործակալությունն առաջին անգամ վարկանշել է Հայաստանի կառավարությանը և շնորհել արտարժույթով և ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորությունների թողարկման «B+» սուվերեն վարկանիշ՝ «դրական» հեռանկարով:</p> <p>Միևնույն ժամանակ, արտարժույթով և ազգային արժույթով կարճաժամկետ սուվերեն վարկավորման համար շնորհվել է «B» վարկանիշ, իսկ փոխանցման և փոխարկելիության դիսկը գնահատվել է «BB-»:</p> <p>Սույն կետը իրականացվել է:</p>
<p>3.4.3. Վերլուծել աուդիտի եզրակացություն ունեցող կամ կառավարման բարձր որակով ընկերություններին տրամադրվող վարկերի մասով պահուստավորման ավելի մեղմ պահանջների սահմանման նպատակահարմարությունը:</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>2021 թ. մարտի 31</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Իսմբի առաջին հանդիպումն իրականացվել է 08/02/2021թ. -ին, որի ընթացքում քննարկվել է միջոցառման կատարման հնարավոր մոտեցումները: Առաջին հանդիպմանը հաջորդել են ևս մի քանի հանդիպում:</li> </ul> <p>Հանդիպումների արդյունքները հաշվի առնելով՝</p>

			<p>2021թ. ապրիլ ամսվա ընթացքում Կենտրոնական բանկի կողմից գրություն է ներկայացրել Էկոնոմիկայի նախարարությանը, որով հայտնել է դիրքորոշում այս միջոցառման իրականացման ոչ նպատակահարմարության մասին:</p> <p>Սույն կետը չի իրականացվել:</p>
<p>3.4.4. Մշակել մեխանիզմներ, որոնցով բանկերը վարկային փաթեթները կգնահատեն ընկերության կողմից ՀՀ ՊԵԿ ներկայացված տվյալներից էապես չտարբերվող ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ Պետական եկամուտների Կոմիտե</p>	<p>2022 թ. հունիսի 30</p>	<ul style="list-style-type: none"> <li>Խմբի առաջին հանդիպումն իրականացվել է 08/02/2021թ. -ին, որի ընթացքում քննարկվել են միջոցառման կատարման հնարավոր մոտեցումները: 2022թ հուլիսի 21-ին դարձյալ կայացել է խմբի հանդիպում, որի ընթացքում քննարկվել են այլընտրանքային տարբերակներ (օրինակ, որոշակի պահանջներին բավարարող ընկերություններին աուդիտի պարտադիր պահանջ սահմանելը): Որոշվեց նաև հստակեցնել, թե ինչպիսի ընկերություններն են հանդիսանում այս միջոցառման թիրախը: Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</li> </ul>
<p>3.4.5. Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պարտադիր նորմերի կիրառության ինստիտուցիոնալ մեխանիզմների սահմանում:</p>	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. դեկտեմբեր 30</p>	<p>Մշակվել է նոր խմբագրությամբ Կորպորատիվ կառավարման կանոնագիրը և այն նախատեսվում է ներկայացնել որպես համապատասխան օրենսդրական փոփոխություն՝ Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի շրջանակներում:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>3.4.6. Որոշակի խմբերի դասվող կազմակերպությունների համար մշակել կորպորատիվ կառավարման ներդրման</p>	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2022 թ. մարտի 31</p>	<p>Ներկայումս Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվում է պետական աջակցության ծրագիր, որը կֆինանսավորի նաև</p>

պետական աջակցության ծրագիր:			<p>կազմակերպություններում կորպորատիվ կառավարման ներդրման համար կատարվող ծախսերի որոշ մասը:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<b>3.5. Ֆինանսական հատվածի կողմից թողարկումներ</b>			
<p>3.5.1. Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի, հիպոտեկային վարկերով ապահովված արժեթղթերի ապահովման միջոցների գրանցման ավտոմատ համակարգի ներդրում:</p>	<p>ՀՀ կադաստրի պետական կոմիտե ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. դեկտեմբերի 31</p>	<p>Սույն կետի իրականացման համար անհրաժեշտ են եղել.</p> <p>1.ապահովման միջոցների գրանցման, գրանցումից հեռացման քայլերի ավտոմատացման հաջորդականությունը, համակարգի անխափան գործարկման և տեղեկատվության արագ և անսխալ փոխանցման միջոցառումների կազմակերպումը երկու կառույցների միջև:</p> <p>2.«ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքում փոփոխությունների իրականացման նախագիծ, որը ներկայացվել է ՀՀ Պետական կադաստրի կոմիտե՝ երկու կառույցների միջև սինխրոնիզացված համակարգի ներդրման նպատակով:</p> <p>«Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի, հիպոտեկային վարկերով ապահովված արժեթղթերի ապահովման միջոցների գրանցման ավտոմատ համակարգի ներդրում» միջոցառման կատարման շրջանակներում Կադաստրի կոմիտեում ներդրված է ապահովման միջոցների՝ կառավարման ավտոմատացված համակարգերի կիրառմամբ գրանցման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման համակարգ: Սակայն այդ համակարգին Կենտրոնական բանկի</p>

		<p>հասանելիությունը ապահովելու համար անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ:</p> <p>Կադաստրի կոմիտեի կողմից մշակվել և 2021 թվականի սեպտեմբերի 19-ի N ՍԹ/8159-2021 գրությամբ շահագրգիռ մարմիններին (այդ թվում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը) է ներկայացվել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) լրամշակված տարբերակը, որով նախատեսվում է սահմանել համապատասխան դրույթներ՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրավունքների, սահմանափակումների և դրանց դադարեցման պետական գրանցման դիմումներն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու վերաբերյալ: Էլեկտրոնային եղանակով ներկայացման կարգը սահմանվելու է ՀՀ կառավարության որոշմամբ:</p> <p>Կադաստրի կոմիտեի 2022 թվականի մայիսի 18-ին N ՍԹ/5120-2022 գրությամբ Նախագիծը ներկայացվել է նաև ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p> <p>ՀՀ կենտրոնական բանկը 2022 թվականի մայիսի 13-ի N 15-07/0355-22 գրությամբ կոմիտեի քննարկմանն է ներկայացրել «Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի մասին» և «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքներում լրացումներ</p>
--	--	---

			<p>կատարելու մասին օրենքների նախագծերը, որոնք նույնպես միտված են հարցի կարգավորմանը: Ի պատասխան տեղեկացվել է, որ կոմիտեի կողմից մշակվել է վերոնշյալ Նախագծի փաթեթը, և առաջարկվել է վերանայել սահմանափակումների գրանցման, գրանցման փոփոխման և գրանցման դադարեցման նպատակով տեղեկատվության փոխանակման կարգը համատեղ հրամանով կարգավորելու վերաբերյալ դրույթները և անշարժ գույքի պետական ռեգիստրի հետ տեղեկատվության փոխանակումը սահմանել որպես բացառություն:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>3.5.2. Ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկումների խրախուսում, այդ թվում՝ միջազգային վարկանիշի ստացմանն աջակցություն:</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2022 թ. հունիս 30</p>	<p>Միջոցառման շրջանակներում ՀՀ ՖՆ-ին վերապահված քայլերը սահմանափակվում են բացառապես միջազգային վարկանիշի ստացման նախադրյալների ստեղծմամբ:</p> <p>ՀՀ ԿԲ դիրքորոշում չի հայտնել սույն կետի վերաբերյալ:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p><b>4. ԱԾԱՆՑՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՇՈՒԿԱ</b></p>			
<p><b>4.1. Ածանցյալ ֆինանսական գործիքների շուկայի զարգացում</b></p>			
<p>4.1.1. Հեջավորման հնարավորությունների ընդլայնման համար ածանցյալների շուկայի զարգացման ուղղությամբ աշխատանքներ (այդ</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների</p>	<p>Շարունակական</p>	<p>1. Ածանցյալների շուկայի զարգացման նպատակով մշակվել է գործողությունների ծրագիր, որը գտնվում է Ֆինանսների</p>



<p>թվում՝ գրագիտության բարձրացում, հարկային հարցերի քննարկում և դրանք հիմնավորված լինելու դեպքում հնարավոր լուծումների առաջարկում և այլն):</p>	<p>Նախարարություն</p>		<p>Նախարարության հետ համաձայնեցման վերջնական փուլում:  2. Ներկա փուլում նաև վերանայվում է ԿԲ խորհրդի կողմից հաստատված նորմատիվ իրավական ակտը, որը խոչընդոտում է բանկերին ածանցյալ գործարքներ կնքել (&lt;&lt; ԿԲ խորհրդի կողմից հաստատված Կանոնակարգ 2): Կանոնակարգում փոփոխությունների նախագիծը գտնվում է առևտրային բանկերի հետ համաձայնեցման փուլում:  3. Ածանցյալների շուկային առնչվող հարկային խնդիրները ներկայացվել են IMF-ին, որը տեխնիկական աջակցություն է տրամադրել ֆինանսների նախարարությանը ընդհանուր կապիտալի շուկայի, այդ թվում՝ ածանցյալների շուկայի հարկման խնդիրների ուղղությամբ:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
--	-----------------------	--	---

**II. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ**

**5. ՆԵՐԴՐՈՂՆԵՐ**

<p><b>5.1. Ներդրողների բազայի ընդլայնում</b></p>			
<p>5.1.1. Կապիտալի շուկայի, դրա ռիսկերի վերաբերյալ կրթական և իրազեկման աշխատանքների իրականացում (այդ թվում՝ քաղաքացիների շրջանում)՝ այս գործընթացում ներառելով ինչպես պետական մարմիններին, այնպես էլ մասնավոր հատվածին:</p>	<p>&lt;&lt; կենտրոնական բանկ (համաձայնությամբ)  &lt;&lt; ֆինանսների նախարարություն  &lt;&lt; էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>Շարունակական</p>	<p>Այս ուղղությամբ իրականացվել (իրականացվում) են հետևյալ միջոցառումները.</p> <p>1. Հանրակրթության պետական չափորոշիչի հիմքի վրա ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի ապրիլի 30-ի հրամաններով հաստատվել են 2021-2022 ուսումնական տարվա առարկայական փորձնական չափորոշիչները և ծրագրերը՝ Տավուշի մարզի հանրակրթական</p>

		<p>ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով: Այդ չափորոշիչներում առկա են արժեթղթերի շուկային, գործիքներին, կապիտալի շուկայի այլ թեմաներին անդրադարձ հասարակագիտության, մաթեմատիկա և հանրահաշիվ առարկաների շրջանակներում:  <a href="https://escs.am/am/category/standard?s=edu">https://escs.am/am/category/standard?s=edu</a></p> <p>Կապիտալի շուկայի վերաբերյալ ֆինանսական բովանդակությունն ընդգրկված է հանրակրթական 4 առարկաների (Ես և շրջակա աշխարհը, Մաթեմատիկա, Հանրահաշիվ, Հասարակագիտություն) ներկայումս գործող չափորոշիչ ու ծրագրերում, ինչպես նաև մեթոդական ձեռնարկներում: Արդյունքում հանրապետության գրեթե բոլոր դպրոցներում 2-րդից 11-րդ դասարանների աշակերտները վերանշյալ առարկաների շրջանակում ֆինանսական կրթություն ուսումնասիրելիս սովորում են նաև, թե ինչ է խնայողությունը, ինչպես կարող են պահել խնայողությունները, ինչ են և որոնք են արժեթղթերի տեսակները, իրացվելիության, եկամտաբերության և անվտանգության ինչ մակարդակներ ունեն, սովորում են, թե ինչ է քրաուդֆանդինգը և այլն:  <a href="https://www.abcfinance.am/ifme/teacher.html">https://www.abcfinance.am/ifme/teacher.html</a>  <a href="https://finance.aspu.am/">https://finance.aspu.am/</a></p> <p>2. Ֆինանսական կրթության տարբեր նախաձեռնությունների ու ծրագրերի շրջանակում անդրադարձ են կատարվում նաև կապիտալի շուկային, օրինակ՝ 2021թ. իրականացված ՖԻՆՇԱԲԹԻ առցանց</p>
--	--	--

		<p>վերինարների շրջանակում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>● Պարտատոմսեր և բանկային ավանդներ՝  <a href="https://www.facebook.com/events/446234320254783/?ti=ls">https://www.facebook.com/events/446234320254783/?ti=ls</a></li> <li>● Ինչպե՞ս ցուցակվել Հայաստանի ֆոնդային բորսայում՝  <a href="https://www.facebook.com/events/537867900614158/?ti=ls">https://www.facebook.com/events/537867900614158/?ti=ls</a> <ul style="list-style-type: none"> <li>● Կորպորատիվ արժեթղթերի շուկան Հայաստանում՝  <a href="https://www.facebook.com/events/635062687477182/?ti=ls">https://www.facebook.com/events/635062687477182/?ti=ls</a></li> <li>● Վստահության գործոնը տնտեսական հարաբերություններում՝  <a href="https://www.facebook.com/events/3058051547804846/?ti=ls">https://www.facebook.com/events/3058051547804846/?ti=ls</a></li> <li>● Ի՞նչ առավելություններ ունի բաժնետիրական ընկերությունների ժողովների էլ. քվեարկությունը՝  <a href="https://www.facebook.com/events/528933498384449/?ti=ls">https://www.facebook.com/events/528933498384449/?ti=ls</a></li> </ul> </li> </ul> <p>3. Եվ վերջապես ՀՀ կենտրոնական բանկի՝ ֆինանսական կրթության ՖԻՆԱՆՍՆԵՐ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ կայքում առկա են կապիտալի շուկային առնչվող բաժիններ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>● Ֆինանսական համակարգ - Արժեթղթերի շուկա՝  <a href="https://www.abcfinance.am/financial_system/what-and-how-to-do.html">https://www.abcfinance.am/financial_system/what-and-how-to-do.html</a></li> <li>● Ֆինանսական համակարգ - Ֆինանսական համակարգի մասնակիցները (այդ թվում՝ արժեթղթերի շուկայի մասնակիցները)՝  <a href="https://www.abcfinance.am/financial_system/finha-makargi-participants.html">https://www.abcfinance.am/financial_system/finha-makargi-participants.html</a></li> </ul>
--	--	--

			<ul style="list-style-type: none"> <li>● Ֆինանսական համակարգ - Ֆինանսական կազմակերպություններ (այդ թվում՝ կապիտալիս շուկան ներկայացնող)՝ <a href="https://www.abcfinance.am/financial_system/banks.html">https://www.abcfinance.am/financial_system/banks.html</a></li> <li>● Կուտակային կենսաթոշակային համակարգ՝ <a href="https://www.abcfinance.am/pension1.html">https://www.abcfinance.am/pension1.html</a></li> </ul> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
5.1.2. Քրաուդֆանդինգի կարգավորումների ներդրում:	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)  ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	2021 թ. դեկտեմբերի 31	<p>Քրաուդֆանդինգի ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը վերջնական հաստատվել են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2022թ.-ի փետրվարի 8-ին:</p> <p>Սույն կետը իրականացվել է:</p>
5.1.3. Թափանցիկության բարձրացում՝ թողարկողների, արժեթղթերի, արժեթղթերով գործարքների վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվության հրապարակման միջոցով (այդ թվում՝ միաժամանակ հայերեն և անգլերեն լեզուներով), որը ներդրողի և այլ օգտագործողների համար կլինի ավելի հարմարավետ և օգտակար:	<p>Հայաստանի ֆոնդային բորսա (համաձայնությամբ)  ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)  ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	Շարունակական	<p>Գործարկվել է Հայաստանի ֆոնդային բորսաի նոր կայքը, որը էապես բարելավել է թողարկողների, արժեթղթերի և դրանցվող իրականացվող գործարքների վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվության հրապարակումը: Կայքի բարելավումները կրում են շարունակական բնույթ և ներկայումս ընթացքի մեջ են:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
5.1.4. Խթանել ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում նոր տեխնոլոգիաների կիրառումը:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	Շարունակական	<ul style="list-style-type: none"> <li>● 23. 12. 2020 թ. -ին տեղի է ունեցել աշխատանքային խմբի առաջին առցանց հանդիպումը:</li> </ul> <p>Հանդիպման ընթացքում որոշվեց, որ խմբի անդամները Կենտրոնական բանկ պետք է</p>

			<p>ներկայացնեն ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում նոր տեխնոլոգիաների կիրառման հնարավոր մոտեցումները: Հանդիպումից հետո այս ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>5.1.5. Միջազգային հարթակներում երկրի ներդրումային միջավայրի ներկայացման, խթանման և ճանաչելիության բարձրացման ծրագրի մշակում:</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. դեկտեմբեր 31</p>	<p>Ընթացիկ ռեժիմով տարվում են աշխատանքներ «Էնթերփրայզ Արմենիա» կողմից, սակայն քանի որ Կապիտալի շուկայի զարգացման ծրագրի դրույթները դեռևս ամբողջությամբ ավարտին չեն հասցվել, սույն գործընթացի արդյունավետությունը բարձր չէ:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>5.1.6. Աշխատել օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ ՀՀ շուկա ներգրավելու ուղղությամբ (այդ թվում՝ կարգավորումների վերանայման և երկրի խթանման միջոցառումների իրականացման միջոցով):</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) Հայաստանի ֆոնդային բորսա (համաձայնությամբ) ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>2021 թ. հոկտեմբեր 31</p>	<p>Լեհաստանի ֆոնդային բորսայի կողմից Հայաստանի ֆոնդային բորսայի ձեռքբերման բանակցությունների ընթացքում լեհական գործընկերների կողմից իրականացվել են քննարկումներ Լեհաստանի ամենախոշոր մի քանի ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հետ, սակայն վերջիններս հետաքրքրություն չեն ցուցաբերել ՀՀ կապիտալի շուկա մուտք գործելու համար:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>

6. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Բորսայական ենթակառուցվածքի բարելավում

<p>6.1.1. Բորսայական գործարքների կամ գործարքների մի մասի համար նախնական դեպոնացման մեխանիզմի վերացում, որը հնարավորություն կտա բարձրացնել արժեթղթերով գործարքների կնքման արդյունավետությունը:</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ Հայաստանի ֆոնդային բորսա (համաձայնությամբ) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. դեկտեմբերի 31</p>	<p>Հայաստանի ֆոնդային Բորսան, մշտապես սերտ համագործակցելով ՀՀ ԿԲ-ի, ՀԿԴ-ի և շուկայի այլ շահագրգիռ մասնակիցների հետ, իր ռազմավարական նպատակների կատարման ընդառաջ աշխատանքներ է տարել և տանում առանց նախնական դեպոնացման բորսակայան առևտրի տարբեր մեխանիզմների հնարավորության ուսումնասիրության և դրանց հնարավոր ներդրմանն ուղղված կոնկրետ քայլերի իրականացման ուղղությամբ: Մասնավորապես, 2020թ. -ից աշխատանքները շարունակվել են ստորև նկարագրված հիմնական երեք ուղղություններով:</p> <p>1. Բորսայի առևտրային հարթակում առանց դեպոնացման արտարժույթով հասցեական գործարքների կնքում:</p> <p>Աշխատանքներն, ըստ էության, մոտեցել են ավարտին: Շրջանառվել, մասնակիցների հետ քննարկվել և ՀՀ ԿԲ է ներկայացվել Առանց դեպոնացման արտարժույթով հասցեական գործարքների կնքման բորսայական կանոնների նախագծերը: Մասնակիցների հետ նախնական թեստավորվել է գործող առևտրային համակազմի արտարժույթային հարթակի նոր ծրագրային հավելվածը: Միաժամանակ, իր կանոններում փոփոխությունների համապատասխան հարցը գտնվում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարության</p>
---	---	----------------------------------	---

		<p>հսկողության ներքո: Առևտրային համակարգի նոր մշակված հավելվածը նույնպես պատրաստ է շահագործման, այն գտնվում է վերջնական թեստավորման ավարտի և «կոդ աուդիտ» -ի փուլում: Նախատեսվում է առաջիկա ամսում շրջանառել շուկայի մասնակիցներին և Բորսայի նոր կանոնների և Դեպոզիտարիայի կանոնների հաստատումից հետո գործարկել այն: 2022թ. ապրիլին հարթակը լիարժեք գործարկվել է, որին ներկայումս մասնակցում են ՀՀ առևտրային բանկերը: Նախատեսվում է մինչ տարեվերջ ընդլայնել մասնակիցների շրջանակը՝ ներառելով ՀՀ ներդրումային, ապահովագրական ընկերություններին, ինչպես նաև՝ վարկային կազմակերպություններին:</p> <p>2. Օվերնայթ վարկային ռեսուրսների/մեկօրյա ռեպո գործարքների առևտրային հարթակի հայեցակարգ.</p> <p>2020թ. Բորսան և Դեպոզիտարիան, որպես ՎՋԵԲ-ի և ՀՀ ԿԲ-ի կողմից տեղական շուկայում արդյունավետ տոկոսադրույքի ձևավորման աշխատանքային խմբի անդամներ(անգլ. MMWG), չնայած կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանափակումներին, համատեղ մշակել և աշխատանքային խմբի անդամներին են ներկայացրել պետական պարտատոմսերի գրավով օվերնայթ վարկային հարթակի հայեցակարգը (անգլ. White Paper on Overnight Credit Resources Trading Platform): Շրջանառվելուն զուգահեռ Բորսայի կողմից իրականացվել է շուկայի մասնագիտացված և շահագրգիռ մասնակիցների համար համապատասխան հարցաշարի կազմում և</p>
--	--	--

		<p>շրջանառում, Բորսայի կողմից լրացուցիչ կազմակերպվել է նաև ավելի նեղ կազմով համապատասխան հայեցակարգի և շրջանառված հարցաշարի մանրակրկիտ քննարկում և կարծիքների փոխանակում: Նախագիծը վերամշակվել և ամփոփ ներկայացվել է ՀՀ ԿԲ և ՎՋԵԲ ներկայացուցիչներին: Հարթակի հայեցակարգի ընդունման դեպքում, ՎՋԵԲ աջակցությամբ, դեպոզիտարիայի հետ համատեղ կկազմվի աշխատանքային պլան, այդ թվում՝ հարթակի տեխառաջադրանք և կձեռնարկվի ներդրման աշխատանքների մեկնարկը: Հարթակը, առանց դեպոնացումների բորսայական առևտրի մեխանիզմ լինելուց բացի, կնպաստի ներքին շուկայում արդյունավետ տոկոսադրույքի(այդ փվում նաև՝ ռեպո) ձևավորմանը, բորսայական առևտրի ծավալների ավելացմանը:2022թ. Հայաստանի ֆոնդային բորսան, համաձայնցնելով ՀՀ կենտրոնական բանկի և շուկայի շահագրգիռ մասնակիցների հետ, վերջնականացրել է պետական պարտատոմսերի մեկօրյա ռեպո հարթակի, համապատասխան ծրագրային հավելված, որը նախատեսվում է գործարկել մինչ տարեվերջ:</p> <p>3. Կենտրոնական գործակալի (անգլ. Central Counterparty -CCP) ինստիտուտի ներդրում 2019թ. հոկտեմբերին Հայաստանի ֆոնդային բորսայի և ՎՋԵԲ-ի բորսայական խորհրդատվական խումբը, Ճապոնիա-ՎՋԵԲ համագործակցության հիմնադրամի աջակցությամբ ներկայացրեց կենտրոնական գործակալի(այսուհետ՝ CCP) ինստիտուտի</p>
--	--	--



		<p>հնարավոր ներդրման եկամուտ-ծախս ծավալուն վերլուծություն խորհրդատվական փաստաթուղթը: Մանրակրկիտ վերլուծվել են ներկա շուկայի իրավիճակը, ներդրման մեթոդաբանական ասպեկտները, քլիրինգի կազմակերպման առաջարկվող մոդելները, ներդրմա սցենարները, ֆինանսական կանխատեսումները և այլն: Ներկայացվել է նաև ամփոփ եզրակացություն և նախանշվել հետագա հնարավոր համատեղ քայլերը Բորսայի և Դեպոզիտարայի համար: Մասնավորապես, առաջարկվել է կազմել կենտրոնական գործակալի ինստիտուտի ներդրման աջակցման ռիսկերի կառավարման, այդ թվում՝ հետառևտրային անանուն և առնվազն T+2 միջավայրի հաստատման, բորսայական և արտաբորսայական համապատասխան կարգավորման միջավայրերի նկարագրման, ապագա պահառուական և առևտրային հարթակների ուսումնասիրման, համապատասխան կրթական ծրագրերի ներդրման, կենտրոնական գործակալի ներդրման նպատակով մասնակիցներին լիարժեք ներգրավման ճանապարհային քարտեզի վերաբերյալ և այլն:</p> <p>Բորսայական գործարքների կամ գործարքների մի մասի համար նախնական դեպոնացման մեխանիզմը դեռևս առկա է: Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
--	--	---

7. ԴԵՊՈԶԻՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳ

7.1. Դեպոզիտար ենթակառուցվածքի բարելավում

<p>7.1.1. Կորպորատիվ պարտատոմսերի համար Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի և Քլիրսթրիմի միջև կապի ակտիվացում</p>	<p>Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (համաձայնությամբ)          ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)          ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2022 թ. հունիսի 30</p>	<p>Clearstream banking Luxembourg-ն իրականացրել է Կենտրոնական դեպոզիտարիայի իրավական ակտերի և տեխնիկական ընթացակարգերի ստուգում և դրա արդյունքում Կենտրոնական դեպոզիտարիան ստացել է բարձր վարկանիշ: Վերջին տվյալներով կորպորատիվ արժեթղթերի համար հաշվի բացման վերաբերյալ հարցը քննարկվում էր Clearstream-ի համապատասխան կոմիտեներում: Ներկայումս գործընթացը ժամանակավոր կանգնած է՝ հաշվի առնելով Ուկրաինայում ընթացող ռազմական գործողությունները:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>7.1.2. Ինտեգրել պետական և կորպորատիվ արժեթղթերի դեպոզիտարիաները:</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)          ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>2022 դեկտեմբերի 31</p>	<p>Կորպորատիվ և պետական պարտատոմսերի պահառուական համակարգերի (համապատասխանաբար Depend և BookEntry համակարգեր) ինտեգրացման նպատակահարմարությունը ուսումնասիրելու նպատակով ԿԲ նախագահի 2017 թվականի հունվարի 31-ի կարգադրությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ:</p> <p>Աշխատանքային խմբի շրջանակում ուսումնասիրվել է BookEntry համակարգով իրականացվող պրոցեսների/գործառույթների Depend համակարգ տեղափոխման բոլոր հնարավոր սցենարները, գնահատվել են համակարգերի ինտեգրացման ծախսերը, որոնք</p>

			<p>ներկայացվել են Ղեկավար Հանձնաժողովին (Steering Committee): Արդյունքում համակարգերի ինտեգրացման մասին վերջնական որոշում չի կայացվել:</p> <p>Depend և BookEntry համակարգերի ինտեգրացման ծրագիրը այժմ ներառվել է կապիտալի շուկայի զարգացման ծրագրում, որի շրջանակում ստեղծված աշխատանքային խումբը վերսկսել է աշխատանքները:</p> <p>Աշխատանքների շրջանակում կրկին վեր են հանվել այն բոլոր ծրագրերը, որոնց արդյունավետ գործարկման համար անհրաժեշտ է պետական պարտատոմսերի պահառության տեղափոխումը ՀԿԴ, մասնավորապես՝</p> <p>1. Եռակողմ Ռեպո և CCP համակարգերի ներդրում</p> <p>Առանց պահառության տեղափոխման տեխնիկապես հնարավոր չէ կամ չափազանց բարդ է իրականացնել այս նախագծերը, քանի որ տարբեր պահառությունների դեպքում անընդհատ պետք է փոխանցումներ լինեն պահառուների մեջ: Ավելին, չկա ծրագրային ապահովում որը տարբեր պահառուների մոտ առկա մնացորդների վրա հաշվարկներ անի:</p> <p>Բացի այս ՎՋԵԲ-ը և Ասիական զարգացման բանկը այս նախագծերի ուսումնասիրության ժամանակ իրենց եզրակացությունների մեջ շեշտել են ՀԿԴ պետական պարտատոմսերի պահառության փոխանցման անհրաժեշտության մասին:</p>
--	--	--	--

		<p>2. Բորսայական հոսքերի միավորում</p> <p>Ներկայումս եթե անձն ունի կորպորատիվ պարտատոմս և ուզում է գնել պետական, ապա լավագույն դեպքում 40 րոպե է տևելու, որպեսզի կարողանա այդ գործողությունն իրականանել: Տեսականորեն հնարավոր է բորսայական հոսքերը միավորել առանց պետական պարտատոմսերի պահառության տեղափոխման, սակայն այս դեպքում ամեն օր ժ. 15:07-16:00 համակարգի անդամները պետք է ցայտնոտի մեջ լինեն, որպեսզի հասցնեն բանկմեյլ համակարգով իրենց պետական պարտատոմսերը փոխանցել ԿԲ, որպեսզի դրանք ներառվեն իրացվելիության նորմատիվի հաշվարկի մեջ: Սա հավելյալ դժվարություններ է ստեղծում հաճախորդների համար:</p> <p>3. Մի հաշիվ բոլոր արժեթղթերի համար</p> <p>Պետական պարտատոմսերի պահառության տեղափոխումը թույլ կտա բարձրացնել պահառության ծառայությունների մատուցման որակը, քանի որ անձը կունենա մեկ հաշիվ բոլոր արժեթղթերի համար, իսկ CDA online համակարգը թույլ կտա անձանց կառավարել նաև պետական պարտատոմսերը հեռահար համակարգերի միջոցով:</p> <p>4. Օտարերկրյա ներդրողների մուտք ՀՀ շուկա</p> <p>Ներկայումս Clearstream-ի հաշվով ներդրում կատարելու համար 2-3 անգամ ավելի շատ գործողություններ են կատարվում ՀՀ ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից,</p>
--	--	---

			<p>քան կարող էր լինել, եթե պահառությունը մեկ տեղ լիներ:</p> <p>5. Ավտոմատացման զարգացման նախագիծը</p> <p>Հնարավոր չէ իրականացնել ծառայությունների ավտոմատացում, թե պահառության համակարգը չի տնօրինվում ՀԿԴ կողմից:</p> <p>Աշխատանքային խումբը անհրաժեշտ է համարում նաև հասկանալ շուկայի (ներդրումային ընկերություններ, բանկեր) կարծիքը՝ համակարգերի ինտեգրման վերաբերյալ, քանի որ այսօր BookEntry համակարգը ծառայությունները մատուցում է անվճար, իսկ Depend համակարգով այս ծառայությունների համար սահմանվելու է ոչ զրոյական սակագին: Շուկայի կարծիքը ամփոփելու նպատակով FINARM-ը շուկայի մասնակիցների հետ կկազմակերպի հանդիպում և հանդիպման արդյունքները կամփոփվեն աշխատանքային խմբի առաջիկա հանդիպման ժամանակ:</p> <p>Քանի որ 2017 թվականին ստեղծված աշխատանքային խմբի շրջանակում արդեն մշակվել են բոլոր պրոցեսների հնարավոր սցենարները և գնահատվել են ծախսերը, որպես հաջորդ քայլ նախատեսում ենք Կենտրոնական բանկում ևս մեկ անգամ ներկայացնել դրանք, ինչպես նաև շուկայի մասնակիցների ամփոփված դիրքորոշումը՝ ակնկալելով գալ համակարգերի ինտեգրացիայի վերաբերյալ վերջնական որոշման:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
--	--	--	--

<p>7.1.3. Ուսումնասիրել բորսայի և դեպոզիտարիայի տեխնիկական հագեցվածությունը, բացահայտել բացերը:</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) Հայաստանի ֆորդային բորսա (համաձայնությամբ) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (համաձայնությամբ)</p>	<p>Շարունակական 2021 թ. հունիսի 30</p>	<p>Միջոցառման արդյունքները կախված են Լեհաստանի ֆոնդային բորսայի ռազմավարությունից:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>7.1.4. Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքների CPSS-IOSCO- ի սկզբունքներին ձևավորված ենթակառուցվածքների համապատասխանության ուսումնասիրություն:</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2021 թ. հունիսի 30</p>	<p>ԿԲ համապատասխան բաժնի կողմից իրականացվել է CPSS-IOSCO սկզբունքներին համապատասխանության գնահատում: 24 սկզբունքներից Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային վերաբերում են միայն 19-ը, որոնք բոլորը գնահատվել են: Ներկա պահին կազմվում է ընդհանուր զեկույց գնահատման արդյունքների վերաբերյալ:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>

**IV. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՌԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ**

**8. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՌԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

**8.1. Օրենսդրական և կարգավորման համակարգի բարելավում**

<p>8.1.1. Իրականացնել «Բաժնետիրական ընկերությունների մասին» և այլ հարակից օրենքների բազմակողմանի ուսումնասիրություն՝ դաշտը համապատասխանեցնելով ժամանակակից պահանջներին, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Վերանայել ընկերությունների բացասական սեփական կապիտալով գործունեության սահմանափակումները:</li> <li>- Ներդնել աշխատակիցներին բաժնեմասային օպցիոնների տրամադրման օրենսդրական կարգավորումները:</li> <li>- Փոխարկվող արժեթղթերի կարգավորումների վերանայում՝ միջազգային պրակտիկային դրանք համապատասխանեցնելու նպատակով:</li> <li>- Ուսումնասիրել սնանկության գործող կարգավորումների ազդեցությունը կապիտալի շուկայի վրա և, ըստ անհրաժեշտության, ներկայացնել առաջարկություններ:</li> </ul>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն  ՀՀ արդարադատության նախարարություն  ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. սեպտեմբերի 30</p>	<p>Իրականացվել է փոփոխություններ իրականացնել «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում, որի արդյունքում վերանայվել է ընկերությունների բացասական սեփական կապիտալով գործունեության սահմանափակումները և ներդրվել են աշխատակիցներին բաժնեմասային օպցիոնների տրամադրման օրենսդրական կարգավորումները: Փոխարկվող արժեթղթերի մասով կարգավորումների մասով առկա է նախագիծ և կներկայացվի օրենսդրական փոփոխությունների: Սնանկության մասով ներկայումս Արդարադատության նախարարության կողմից նախաձեռնվել են օրենսդրության փոփոխություններ, որի ժամանակ կներկայացվի նաև սույն կետի փոփոխությունը:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>8.1.2. Շահաբաժինների և տոկոսային եկամուտների համար եկամտային հարկի և շահութահարկի հարկման հանրագումար բեռի առնչությամբ երկարաժամկետ քաղաքականության որոշում, այդ թվում՝ արդեն տրամադրված հարկային արտոնությունների գործողության ժամկետները հստակեցնելով շուկայի մասնակիցների համար:</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն  ՀՀ էկոնոմիկայի նախարարություն  ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. հունիսի 30</p>	<p>Կառավարության կողմից իրականացվող առաջիկա տարիների հարկային քաղաքականության ուղղությունները նախանշելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և ՀՀ վարչապետի ս.թ. օգոստոսի 12-ի թիվ 919-Լ որոշմամբ հաստատվել է «2022-2025 թվականների հարկային եկամուտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին» որոշումը, որով սահմանված են 2022-2025 թվականների հարկային բարեփոխումների ուղղությունները:</p> <p>Այս առումով, հայտնում ենք, որ առաջիկա</p>

			<p>տարիներին հարկային բարեփոխումները իրականացվելու են վերոնշյալ որոշմամբ սահմանված ուղղություններով:</p> <p>Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ տոկոսային եկամուտների հարկման մասով կարգավորումների վերանայման առումով ս.թ. ապրիլի 12-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-92-Ն օրենքը, որով, մասնավորապես, սահմանվել է, որ 2023 թվականի հունվարի 1-ից տոկոսների մասով եկամտային հարկը գործող օրենսդրությամբ սահմանված՝ 10 տոկոս դրույքաչափի փոխարեն հաշվարկվելու է 20 տոկոս դրույքաչափով: Մյուս կողմից՝ սահմանվել է, որ բանկային ավանդի և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանն առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց վճարվող տոկոսների մասով եկամտային հարկը շարունակելու է հաշվարկվել 10 տոկոս դրույքաչափով:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>8.1.3. Ուսումնասիրել կարգավորվող շուկայում կազմակերպությունների առանձին խմբերի (այդ թվում՝ ՓՄՁ) արժեթղթերի թույլտվության գործընթացի պարզեցման հնարավորությունները:</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն  ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)  Հայաստանի ֆորդային բորսա (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. հունիսի 30</p>	<p>Իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, կազմվել է հայեցակարգ և համապատասխան շուկայի նախնական նկարագիրը: Նախատեսվել է շուկայի վերլուծություն վերջնական նկարագրի կազմման համար: Ներկայումս Բորսան իրականացնում է ՀՀ տնտեսության</p>



			<p>համապարփակ ուսումնասիրություն՝ 1000 խոշոր հարկատուներ, ստարտափների էկոհամակարգ և այլն:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<b>8.2. Վերահսկողություն բարելավում</b>			
<p>8.2.1. Արժեթղթերի շուկայի իրավական դաշտի՝ Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության արժեթղթերի կարգավորման սկզբունքներին և նպատակներին համապատասխանության ուսումնասիրություն:</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. հունիսի 30</p>	<p>Այս պահին ԿԲ կողմից IOSCO-ի 1 սկզբունք է գնահատվել: 5 սկզբունքի գնահատումն ավարտելուց հետո, դրանք կներկայացվեն կարծիքի ԿՇԶԾ-ի ներքո ձևավորված աշխատանքային խմբի անդամներին:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>
<p>8.2.2. ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության և ռիսկերի վերահսկման համակարգերի գնահատում՝ Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության և Միջազգային հաշվարկների բանկի ֆինանսական շուկայի ենթակառուցվածքների սկզբունքներին համապատասխան:</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p>	<p>2021 թ. հունիսի 30</p>	<p>ԿԲ համապատասխան բաժնի կողմից իրականացվել է CPSS-IOSCO սկզբունքներին համապատասխանության գնահատում: 24 սկզբունքներից Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային վերաբերում են միայն 19-ը, որոնք բոլորը գնահատվել են: Ներկա պահին կազմվում է ընդհանուր զեկույց գնահատման արդյունքների վերաբերյալ:</p> <p>Սույն կետի իրականացումը դեռևս ընթացքի մեջ է:</p>